ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/17» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 26.12.2019թ.

Ժամը 11[30]

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա. Նազարյանը,
գնահատողներ՝
- ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյանը,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյանը:

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Թազայանը:

Բացակայում էր՝ ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ. Անտոնյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/17» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Լ. Թազայան)

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) պայմաններին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) պայմաններին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Լ. Թազայան)

1.1 *ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված 11.11.2019թ.-ին տրամադրած համապատասխան եզրակացության համաձայն 1-ին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով գնահատող հանձնաժողովի կողմից չի գնահատվել:*

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/17» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չեն ունեցել, *բացառությամբ «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի*, մասնավորապես ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 12.12.2019թ. տրամադրված եզրակացության հիմա վրա «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ուներ ժամկետանց պարտավորություններ (1000 մեկ հազար ՀՀ դրամ): Քանի որ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը չէր գերազանցում «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը և ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, ուստի գնահատող հանձնաժողովը մասնակցի տվյալները գնահատեց սույն ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար (համապատասխան):

1.2 17.12.2019թ. կայացրած նիստում մասնակիցների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/17» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված)՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերին (տեխնիկական բնութագրերին) վերաբերող փաստաթղթերն ներկայացվել են սահմանված ժամկետում (առկա են) և համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «ՍԴԴ ԳՐՈՒՊ», «ԼԵՅԿՈ», «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ», «Լևոն և Լամարա» և «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ների ներկայացված որակավորման փաստաթղթերի:

- «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից օրենքով սահմանված ժամկետում չեն ներկայացվել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը (այն ներկայացվել է օրենսդրության կարգի խախտմամբ՝ 16.12.2019թ.-ին, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել): Անհրաժեշտ է ներկայացվել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

- «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝

-բացակայում է ընթացակարգի հրավերով պահանջվող առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը (հավելված N3):

- «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 10-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում հավելված N 3.1-ում ապրանքի անվանումը սյունակում նշված է «Սոնոգել կամ համարժեք ուլտրաձայնային հետազոտությունների դոնդող 250գ» անհրաժեշտ է հստակեցնել ապրանքի անվանումը, բացառելով «*կամ համարժեք*» արտահայտությունը:

76-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում նշվել է 210մմ Z- folded (զիպ փաթեթով) կամ Roll, անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքի փաթեթի տեսակը՝ զիպ փաթեթով, թե Roll:

- «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝

Սույն գնման ընթացակարգի շրջանակներում առաջին տեղ զբաղեցրած մասնակից էր ճանչվել 21-րդ չափաբաժնի մասով, սակայն ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում հավելված N 3.1-ում չափաբաժնի համարը նշված էր 26: Անհրաժեշտ է հավելված N 3.1-ում նշված չափաբաժնի համարը համապատասխանեցնել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանչված չափաբաժնի համարին:

- «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 12-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում հավելված N 3.1-ում նշվել է Օմնիպակ-350 կամ համարժեք 100 մլ անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքի անվանումը՝ բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը և համապատասխանեցնել ՀՀ-ում դեղերի պետական գրանցամատյանում առկա անվանման հետ:

Ելնելով վերոգրյալից՝ 18.12.2019թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի պահանջները՝ երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով դրա մասին տեղեկացրեց «ՍԴԴ ԳՐՈՒՊ», «ԼԵՅԿՈ», «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ», «Լևոն և Լամարա» և «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ--ներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունները:

25.12.2019թ. գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ «ՍԴԴ ԳՐՈՒՊ», «ԼԵՅԿՈ», «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ», «Լևոն և Լամարա» և «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ--ների կողմից սահմանված ժամկետում շտկվեցին ծանուցմամբ արձանագրված անհամապատասխանությունները և հանձնաժողովը մասնակիցների որակավորման փաստաթղթերը գնահատեց բավարար՝ հրավերի պահանջներին համապատասխան:

«ՍԴԴ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն սույն գնման ընթացակարգի շրջանակներում առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանչվել 14-րդ և 15-րդ չափաբաժինների մասով, սակայն իր կողմից ներկայացված հավելված N 3.1-ում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր ներկայացրել էր նաև 23-րդ չափաբաժնի մասով տեխնիկական բնութագիր, քանի որ նշված չափաբաժնի մասով «ՍԴԴ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ը առաջին տեղ զբաղեցրած մասնակից չէր ճանաչվել, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից չքննարկվեց 23-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը:

1.3 Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/17» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մասնակիցների տվյալները գնահատեց սույն ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար (համապատասխան) և որոշեց վերջիններիս հայտարարել ընտրված մասնակիցներ այն չափաբաժիններում, որտեղ վերջիններս ճանաչվել էին 1-ին տեղ զբաղեցնող և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/17» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Լ. Թազայան

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/17» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11^{00}-ն, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Նազարյան

Գնահատող Վ. Վահանյան

Գնահատող Հ. Ավետիսյան

Գնումները համակարգող Լ. Թազայան